ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Սեպտեմբեր 2018

Տարբեր հաշվարկների համաձայն՝ Թուրքիայում ներկայումս բնակվում է 10,000-40,000[1] հայաստանցի միգրանտ: Նրանց մեծ մասը Ստամբուլում ապրող աշխատանքային միգրանտներ են: Հայաստանի քաղաքացի միգրանտներին հանդիպած խնդիրներն ու խոչընդոտները նույն օրինաչափություններն ունեն, ինչ որ Թուրքիայի այլ անկանոն միգրանտների խմբերը,[2] սակայն դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների, ինչպես նաև անմիջական հյուպատոսական ծառայություններ մատուցող և արտակարգ իրավիճակներում աջակցություն տրամադրող պաշտոնական մարմինների բացակայությունը Հայաստանի քաղաքացի միգրանտներին ավելի խոցելի դրության մեջ է գցում: Թուրքիայում Հայաստանի քաղաքացի միգրանտների ժողովրդագրական կառուցվածքի, կարիքների, ինչպես նաև խնդիրների վերաբերյալ հավաստի տվյալների բացակայությունը դժվարություններ է ստեղծում նրանց հանդիպող խնդիրների լուծմանն ուղղված իրական աջակցություն տրամադրող մեխանիզմներ առաջարկելու համար: Այս իրավիճակը բարելավելու համար Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խումբը[3] առաջարկեց կարիքների գնահատման ուսումնասիրություն իրականացնել Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտների և նրանց երեխաների շրջանում՝ նրանց իրավիճակն ու կարիքները ավելի լավ հասկանալու համար: Հետազոտությունն իրականացվել է 2017թ.-ի նոյեմբերից մինչև 2018թ.-ի ապրիլն ընկած ժամանակահատվածում Ստամբուլի Բիլգի համալսարանի Միգրացիայի ուսումնասիրության կենտրոնի և Հրանտ Դինք հիմնադրամի համատեղ ջանքերով: Հետազոտության շրջանակներում հարցվել է 153 միգրանտ ընտանիք, ինչպես նաև ուսումնական հաստատություններ հաճախող 160 միգրանտ երեխա: Հետազոտության արդյունքները մեկտեղված են «Անորոշ կեցություն. Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտների և նրանց երեխաների դրությունը» զեկույցում, որը տպագրվել է 2018թ.-ի սեպտեմբերին:[4]

Տվյալներ և իրավական կարգավիճակ

Թուրքիայում բնակվող Հայաստանի քաղաքացիների թվի վերաբերյալ վիճակագրական տվյալները հանրայնորեն հասանելի չեն, ինչպես Թուրքիայում բնակվող շատ այլ միգրանտ համայնքների դեպքում է: Հայաստանցի միգրանտների հնարավոր թվին առնչվող տարաբնույթ ենթադրություններ, այնուամենայնիվ, կան: Տարբեր աղբյուրների, ներառյալ պաշտոնատար անձանց և հետազոտողների կողմից տարբեր ժամանակներում կատարված հաշվարկների համաձայն՝ այդ թիվը կարող է լինել ընդամենը 5-10 հազար կամ հասնել ընդհուպ մինչև 70 հազարի, ընդ որում՝ շատերը պնդում են, թե իրական թիվն այդ երկու ցուցանիշների մեջտեղում է և կազմում է մոտ 15-20 հազար: Այս միգրանտներից շատերը Թուրքիայում բնակվելու կամ աշխատելու թույլտվություն չունեն, ուստի համարվում են անկանոն միգրանտներ: Թեև օրինական թույլտվություն ձեռք բերած միգրանտների թիվը թեթևակի աճել է, 2017թ.-ին Հայաստանի միայն 150 քաղաքացի է դիմել աշխատանքային թույլտվություն ստանալու համար, ինչը միգրանտների ընդհանուր թվի մի փոքր մասն է կազմում:[5] Մինչև 2011թ.-ը Հայաստանի շատ քիչ քաղաքացիներ են դիմել աշխատանքային թույլտվություն ստանալու համար, սակայն 2012-2013թթ.-ից սկսած՝ այդ դիմումների թիվն ավելի քան կրկնապատկվել է՝ 84-ից հասնելով 188-ի: Հետագա տարիներին այդ թիվը գրեթե անփոփոխ է մնացել. 2014թ.-ին ՝ 180 դիմում, 2015թ.-ին՝ 197 դիմում, 2016թ.-ին՝ 174 դիմում, իսկ 2017թ.-ին՝ 150 դիմում: Դիմողների մոտ 86.5 տոկոսը կանայք են եղել, իսկ

մոտ 44 տոկոսը եղել է 50 կամ ավելի տարեկան: Հայաստանի քաղաքացի միգրանտների գործատուների ճնշող մեծամասնությունը՝ մոտ 70 տոկոսը, տանը աշխատանք կատարող անձանց վարձող տնային տնտեսություններ են: Հարցվածները նշել են, որ աշխատում են որպես հավաքարար, խնամքի ոլորտի աշխատակից, վաճառող, ուսուցիչ և առաքիչ:[6] Ի լրումն աշխատանքի իրավունք ունեցողների՝ միգրանտների ստվար մասն ունի երկարատև կամ տուրիստական կացության իրավունք, ինչը, սակայն, չի արտոնում աշխատելը: Հարցվածների մեկ երրորդն ունի կարճաժամկետ կացության իրավունք, և միայն 8 տոկոսն ունի աշխատանքի իրավունք:

Թեև հարցվածները Թուրքիայում օրինական կացություն ձեռք բերելու ցանկություն հայտնել են, դա իրագործելու հիմնական խոչընդոտը նրանց համար վիզայի ժամկետի գերազանցման տուգանքն է եղել:[7] Կուտակված տուգանքի չափը շատ մեծ գումար կարող է կազմել հատկապես նրանց համար, ովքեր այդ ժամկետը գերազանցել են բավականին երկար ժամկետով: Տուգանքի չափը հաշվարկվում է՝ վիզայի ժամկետի լրանալու օրվանից սկսած: Վիզայի ժամկետի գերազանցման տուգանքը կիրառվում է չափահաս միգրանտների նկատմանբ, ովքեր Թուրքիա մուտք են գործել տուրիստական վիզայով և գերազանցել են դրա վավերականության ժամկետը, ինչպես նաև Թուրքիայում ծնված այն երեխաների նկատմամբ, ովքեր կացության իրավունք չունեն:

Դիվանագիտական հարաբերությունների և հյուպատոսական ծառայությունների բացակայությունից բխող խնդիրներ

Թուրքիայում դեսպանության և հյուպատոսությունների բացակայության պատճառով Հայաստանի քաղաքացիներն անմիջականորեն չեն կարող օգտվել հյուպատոսական հիմնարար ծառայություններից, օրինակ՝ **շատ հայ միգրանտներ չեն կարող իրենց անձնագրերը փոխել, ծննդյան, մահվան, ամուսնության և ամուսնալուծության վկայականներ ձեռք բերել:** Հետազոտության ընթացքում հարցվածների 51 տոկոսը փաստել է, որ իրենք ստիպված են եղել Հայաստան գնալ իրենց անձնագրերը փոխելու կամ ժամկետը երկարացնելու համար:[8] Մյուս կողմից՝ ում **անձնագրի ժամկետը լրացած է լինում**, առաջին հերթին պետք է **վերադարձի վկայական** ձեռք բերեն, որպեսզի դուրս գան Թուրքիայից և մուտք գործեն Հայաստան: Օրենսդրության համաձայն՝ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի, ներառյալ նրանց երեխաները, անգամ եթե նրանց նախկինում անձնագիր չի տրամադրվել, իրավունք ունեն ձեռք բերելու ՀՀ վերադարձի վկայական: Եթե վկայական հայցողը այնպիսի երկրում է, որտեղ հնարավոր չէ դիմել Հայաստանի դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական գրասենյակների, վկայականը հնարավոր է ձեռք բերել ՀՀ Արտաքին գործերի նախարարությունից ընտանիքի անդամի կամ լիազորված անձի միջոցով, ինչը կարող է լինել դժվար և ժամանակատար գործընթաց, հատկապես արտակարգ իրավիճակների դեպքում:

Հյուպատոսական ծառայությունների բացակայության պատճառով ի հայտ եկած խնդիրներից ամենամեծը **Թուրքիայում Հայաստանի քաղաքացի միգրանտների երեխաների** համար անձը հաստատող փաստաթղթեր ձեռք բերելն է: Թուրքիայում երեխա ունեցած 26 հարցվածներից 13-ը չի կարողացել պետության կողմից տրամադրվող անձը հաստատող որևէ փաստաթուղթ ձեռք բերել իր երեխայի համար: Այլ կերպ ասած՝ հարցված տնային տնտեսությունների շրջանում Թուրքիայում ծնված երկու երեխայից մեկը **չունի պետության կողմից տրամադրվող անձը հաստատող որևէ փաստաթուղթ**: Հայաստանի քաղաքացի հանդիսացողների երեխաները մեխանիկորեն համարվում են Հայաստանի քաղաքացիներ՝ անկախ նրանց ծննդավայրից: **Երեխաների համար ՀՀ անձնագիր ձեռք բերելու համար** ծնողները նախ և առաջ պետք է հիվանդանոցի կողմից տրամադրված ծնունդը փաստող արձանագրությունը տանեն Բնակչության վարչություն և գրանցեն ծնունդը Թուրքիայում, այնուհետև պետք է Հայաստանում դիմում ներկայացնեն անձամբ կամ լիազորված անձի միջոցով՝ ծննդյան գրանցման փաստաթուղթը ՀՀ Արտաքին գործերի նախարարություն ներկայացնելու համար: Եթե նրանք նախընտրում են այս գործընթացն անձամբ իրականացնել, նրանք նախ պետք է երեխայի համար Հայաստանից վերադարձի վկայական ձեռք բերեն և վճարեն վիզայի ժամկետը գերազանցելու տուգանքը՝ Թուրքիայից դուրս գալու համար:

Ավելին, **արտակարգ իրավիճակների** դեպքում չկա որևէ պաշտոնական մարմին,

որ անմիջական աջակցություն ցուցաբերի Թուրքիայում բնակվող Հայաստանի քաղաքացիներին: Հետազոտության ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ միգրանտները խնդիրների առաջ են կանգնել՝ ընտանիքի որևէ անդամի **մահվան գրանցման և հուղարկավորությունը Թուրքիայից Հայաստան տեղափոխելու** հետ կապված: Եղել է նաև դեպք, երբ գրանցում չունեցող Հայաստանի քաղաքացի հանդիսացող կնոջը, ով հիշողության կորուստ է ունեցել, տեղափոխել են Ստամբուլի հանրային հիվանդանոց: Քանի որ նա չի ունեցել անձը հաստատող որևէ փաստաթուղթ, բժիշկները կարողացել են նրա ինքնությունը պարզել՝ վերցնելով նրա մատնահետքը, սակայն նրանք այդպես էլ չեն գտել Թուրքիայի կամ Հայաստանի որևէ մարմին, ում հետ կապ կհաստատեին՝ օգնություն խնդրելու համար:

Կրթություն

Անկանոն միգրանտների երեխաները չեն կարող Թուրքիայում դպրոց հաճախել, քանի որ ուսումնական հաստատություններն ընդունելության համար պահանջում են ներկայացնել ժամանակավոր նույնականացման քարտ (ID), որը տրամադրվում է կացության կամ աշխատանքի իրավունք ունեցող միգրանտներին թուրքական իշխանությունների կողմից: Թեև Ստամբուլում գործում է 16 հայկական դպրոց, դրանցից ոչ մեկը չի կարող Հայաստանի քաղաքացի երեխաներին գրանցել՝ որպես մշտական աշակերտներ: Ուստի նույնիսկ Թուրքիայում օրինական գրանցում ունեցող Հայաստանի քաղաքացի միգրանտները չեն կարող իրենց երեխաներին գրանցել Ստամբուլի հայկական դպրոցներում: 2012թ.-ից ի վեր Թուրքիայի՝ «Մասնավոր ուսումնական հաստատությունների մասին» կանոնակարգում կատարված փոփոխությունների շնորհիվ՝ հայ միգրանտների երեխաները՝ թե՛ կանոնավոր, թե՛ անկանոն կարգավիճակով, կարող են **«հյուր-աշակերտի»** կարգավիճակով հաճախել Ստամբուլի 16 հայկական դպրոցներ, թեև նրանք **չեն ստանում ավարտական վկայական** կամ այլ պաշտոնական փաստաթուղթ: Ներկայումս 100-ից ավել Հայաստանի քաղաքացի միգրանտ երեխա հաճախում է այս դպրոցներ՝ որպես հյուր-աշակերտ: Ավելին, 2003թ.-ից ի վեր մոտ 150 երեխա ոչ պաշտոնական կարգավիճակով հաճախում է Գեդիկփաշայի հայկական բողոքական եկեղեցու կողմից տրամադրվող դասերին, ինչը եկեղեցին անում է՝ փորձելով միգրանտ երեխաներին կրթությունից զուրկ չպահել: Առաջարկվող ուսումնական ծրագիրը հիմնված է ՀՀ միջնակարգ կրթության ուսումնական հիմնական ծրագրի վրա: Այս երեխաները նույնպես որևէ պաշտոնական փաստաթուղթ կամ ավարտական վկայական չեն ստանում: Երկու դեպքում էլ երեխաները ունեն Հայաստանում քննություններ հանձնելու և ավագ դպրոց հաճախելու տարբերակ, սակայն այն պարագայում միայն, եթե կարողանան վիզայի ժամկետը գերազանցելու տուգանքը վճարել և Հայաստան ճամփորդել: Եթե նրանք Թուրքիայից մեկնեն առանց վիզայի ժամկետը գերազանցելու տուգանքը վճարելու, նրանց որոշակի ժամկետով կարգելվի կրկին Թուրքիա մուտք գործել:[10] Արդյունքում **հայ միգրանտները չեն կարող մասնակցել Թուրքիայում ավագ դպրոցների և համալսարանների ընդունելության քննություններին և չեն կարող ընդունվել համալսարան**:



Հետազոտության արդյունքների համաձայն՝ թեև երեխաների մեծամասնությունը (59 տոկոս) նախընտրում է կրթությունը շարունակել Հայաստանում, նշանակալից թվով երեխաներ (26 տոկոս), այնուամենայնիվ, նախընտրում են մնալ Թուրքիայում, այնտեղ շարունակել իրենց կրթությունը՝ հաճախելով թուրքական համալսարաններ: Ուստի այս աշակերտները պետք է ունենան **վավեր ավարտական փաստաթղթեր և վկայականներ, որոնք կընդունվեն Հայաստանի և Թուրքիայի կողմից** և որոնք աշակերտներին երկու երկրում էլ իրենց կրթությունը շարունակելու հնարավորություն կտան:

Առողջապահություն

Հայաստանի քաղաքացի միգրանտների շրջանում հարցվածներից շատերը, ներառյալ քրոնիկ և կյանքին վտանգ սպառնացող առողջական խնդիրներով անձինք, չեն կարող օգտվել բժշկական ծառայություններից կամ ձեռք բերել անհրաժեշտ դեղամիջոցներ: Հարցվածների **մեկ երրորդը նշել է, որ հիվանդության դեպքում չի դիմում որևէ բժշկական հաստատության**: Հայաստանի քաղաքացի միգրանտները նշում են, որ նրանց հիմնական խնդիրները ի հայտ են գալիս անձը հաստատող վավեր փաստաթուղթ և/կամ կացության իրավունք չունենալու, ինչպես նաև բժշկական ծառայություններից օգտվել չկարողանալու պատճառով:

Այն միգրանտները, ովքեր ունեն ժամկետն անց անձնագրեր կամ կացության իրավունք, տարակուսում են հիվանդանոցներ գնալու հարցում՝ լինեն դրանք պետական, թե մասնավոր, վախենալով, որ միգուցե միգրացիոն մարմինները կտեղեկացվեն իրենց մասին: Ի լրումն՝ **Թուրքիայում ծնված երեխաներին, ովքեր դեռևս ձեռք չեն բերել անձը հաստատող փաստաթուղթ, հաճախ մերժում են հիվանդանոցային ծառայություններ ստանալու հարցում**: Միգրանտների և նրանց երեխաների համար առողջապահական ծառայությունների մատչելիությունը մեկ այլ խնդիր է: Առանց որևէ առողջապահական ապահովագրության անկանոն միգրանտներն ստիպված են իրենք հոգալ բոլոր ծառայությունների համար: Հարցվածների շրջանում առողջապահական հաստատություններ դիմողների մեծամասնությունը (73 տոկոս) առողջապահական ծախսերը հոգում է սեփական միջոցների հաշվին:

Եդիքուլեի Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցն ուսումնական հաստատություններ հաճախող միգրանտ երեխաների համար անվճար բուժօգնություն է տրամադրում, սակայն արտակարգ իրավիճակների դեպքում՝ հատկապես շաբաթ-կիրակի օրերին և արձակուրդներին, նրանք չեն կարողանում անմիջապես գնալ հիվանդանոց և բուժօգնություն ստանալ՝ առանց դպրոցից տեղեկանք վերցնելու: Պատվաստման կարիք ունեցող ավելի փոքր տարիքի երեխաները և նորածինները, ինչպես նաև այն երեխաները, ովքեր դպրոց չեն հաճախում, զրկվում են այս բուժօգնությունից: Այս ծառայությունը հասանելի չէ չափահաս միգրանտներին:

Առաջարկություններ

Մարդկանց կյանքի վրա ազդող այս խնդիրները բարելավելու նպատակով Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խմբի անդամները ներկայացրել են առաջարկություններ/քայլեր, որ Հայաստանը և Թուրքիան կարող են իրականացնել: Դրանք կարող են կյանքի կոչվել գոյություն ունեցող իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներում՝ այս համատեքստում առկա միջազգային համաձայնագրերի համաձայն:

Հյուպատոսական ծառայություններ՝

ուղղված Հայաստանի և Թուրքիայի կառավարություններին.

● Հայաստանը և Թուրքիան կարող են համաձայնության գալ այնպիսի մի ձևաչափի շուրջ, որը թույլ կտա իրենց քաղաքացիներին հյուպատոսական ծառայություններ և արտակարգ իրավիճակների դեպքում աջակցություն տրամադրել՝ անկախ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների մակարդակից:

Այս ուղղությամբ կարելի է դիտարկել հետևյալ հնարավորությունները՝ ըստ նախընտրելի հերթականության.

○ հիմնել հյուպատոսական հարաբերությունների/ծառայությունների գրասենյակներ՝ անմիջական հյուպատոսական ծառայություններ մատուցելու նպատակով: Հարևան երկրում հյուպատոսական գործառույթներ իրականացնող և արտակարգ իրավիճկների դեպքում աջակցություն տրամադրող ներկայացուցչական մարմին հիմնելու հնարավորությունը հասանելի է թե՛ միջազգային իրավական փաստաթղթերի, թե՛ առկա հյուպատոսական պրակտիկայի շնորհիվ:[11]

○ հիմնել շահերը ներկայացնող վարչություններ երրորդ երկրի դիվանագիտական առաքելության շրջանակներում՝ քաղաքացիներին հյուպատոսական ծառայություններ և արտակարգ իրավիճակների դեպքում աջակցություն տրամադրելու նպատակով:

Որոշ դեպքերում միմյանց հետ դիվանագիտական հարաբերություններ չունեցող պետությունները սեփական շահերը ներկայացնող վարչություններ են հիմնում երրորդ երկրի դիվանագիտական առաքելություններում:[12]

● Հայաստանի և Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունների միջև թեժ գիծ հաստատել՝ արտակարգ իրավիճակների դեպքում երկու երկրների քաղաքացիների խնդիրներին արագ արձագանքելու նպատակով:

Աջակցություն Թուրքիայում կանոնավոր և օրինական կացություն ձեռք բերելու հարցում՝

ուղղված Թուրքիայի կառավարությանը.

● Թուրքիան կարող է չեղյալ համարել Հայաստանի քաղաքացի հանդիսացող այն երեխաների վիզայի ժամկետը գերազանցելու տուգանքները, ովքեր Թուրքիայում են ծնվել, Թուրքիայից երբեք դուրս չեն եկել և մտադիր են գնալ Հայաստան՝ ձեռք բերելու/փոխելու իրենց անձնագրերը և փաստաթղթերը:

Կրթություն՝

ուղղված Հայաստանի և Թուրքիայի կառավարություններին.

● Թուրքիան կարող է դիտարկել հավելյալ օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան հյուր-աշակերտներին պաշտոնապես գրանցվել Ստամբուլի հայկական փոքրամասնության դպրոցներում, և Հայաստանի քաղաքացի աշակերտներին կտրամադրվեն ավարտական վկայականներ՝ փոփոխություններ մտցնելով «Մասնավոր ուսումնական հաստատությունների մասին» կանոնակարգում՝ 2012թ., հոդված 51/5:[13]

● Հայաստանը կարող է դյուրացնել Թուրքիայի դպրոցներում սովորող Հայաստանի քաղաքացիների անցումային փուլը, որպեսզի նրանք կարողանան շարունակել իրենց կրթությունը Հայաստանի դպրոցներում և համալսարաններում:

● Թուրքիան կարող է դյուրացնել այն պետական կրթական ծրագրերի մշակումը, որոնք թույլ կտան Թուրքիայում բնակվող հայ միգրանտ երեխաներին ժամանակավորապես կրթություն ստանալ՝ հիմնված իրենց քաղաքացիության երկրի ծրագրի վրա: Այս նպատակով Հայաստանը և Թուրքիան կարող են տարբեր մոդելներ առաջ քաշել, որպեսզի Գեդիկփաշայի Հրանտ Դինքի անվան դպրոցը Թուրքիայում օրինական կարգավիճակ ձեռք բերի: Թուրքական օրենսդրության համաձայն՝ ներկայիս «միջազգային դպրոցի» մոդելը, որը տեղ է գտել «Մասնավոր ուսումնական հաստատությունների մասին» կանոնակարգում՝ 5580, 2007թ., հոդված 3-ում,[14] կարող է լինել ամենահավանական ձևաչափը: Միջազգային դպրոցները Թուրքիայում հաստատվում են կառավարության/նախագահի հրամանագրով: Այդ դպրոցները ընդունում են միայն ոչ քաղաքացի օտարերկրացի աշակերտների և ուսուցանում են նրանց իսկ կրթական ծրագիրը՝ նրանց իսկ լեզվով՝ Թուրքիայի Ազգային կրթության նախարարության կողմից հաստատման պարագայում:

Աջակցության մեխանիզմներ.

Եթե լինի կառավարությունների՝ առկա խնդիրները լուծելու կամքը, կարելի է դիտարկել տարբեր կառույցների և աջակցության մեխանիզմների հնարավորությունները:

Ուղղված Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության դերակատարներին.

● ձևավորել/աջակցել իրավաբանների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իշխանությունների մեխանիզմներ/ցանցեր, որոնք Հայաստանի քաղաքացի միգրանտներին կտրամադրեն տեղեկատվություն, իրավաբանական աջակցություն և ծառայություններ նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝ ներգրավելով երկու երկրների իրավաբանների ասոցիացիաներն ու մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակները,

● խրախուսել Ստամբուլի հայ համայնքին Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտներին աջակցություն և ծառայություններ տրամադրելու հարցում՝ նրանց կրթական և առողջապահական կարիքները հոգալու համար: Օրինակ՝ Ստամբուլի հայկական հիվանդանոցները կարող են մեխանիզմներ մշակել՝ վավեր փաստաթղթեր և դրամական միջոցներ չունեցող Հայաստանի քաղաքացի միգրանտներին առողջապահական ծառայություններ մատուցելու համար:

1 Էմրե Էրդողան և Փընար Ույան Սեմերջի, «Անորոշ կեցություն. Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտների և նրանց երեխաների դրությունը», Ստամբուլ, Հրանտ Դինք հիմնադրամ հրատարակչություն, 2018թ., էջ 28:

2 Մասնավորապես խորհրդային այլ երկրներից, օրինակ՝ Վրաստանից եկած միգրանտներ: Adrese Dayalı Nüfus Kayıt Sistemi, Türkiye İstatistik Kurumu / Բնակչության գրանցման համակարգ՝ ըստ հասցեների, Թուրքիայի Վիճակագրական ինստիտուտ:

3 http://hrantdink.org/en/activities/projects/turkey-armenia-relations-programme/dialogue-groups/411-armenia-turkey-expert-dialogue-group

4 Էմրե Էրդողան և Փընար Ույան Սեմերջի, «Անորոշ կեցություն. Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտների և նրանց երեխաների դրությունը», Ստամբուլ, Հրանտ Դինք հիմնադրամ հրատարակչություն, 2018թ.:

5 Թուրքիայի Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության Վիճակագրության կառավարման տեղեկատվական համակարգ:

6 Էմրե Էրդողան և Փընար Ույան Սեմերջի, «Անորոշ կեցություն. Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտների և նրանց երեխաների դրությունը», Ստամբուլ, Հրանտ Դինք հիմնադրամ հրատարակչություն, 2018թ., էջ 60:

7 «Օտարերկրացիների և միջազգային պաշտպանության մասին» օրենք 6458-ը և դրա կանոնակարգերը ներկայացնում են վիզայի ժամկետը գերազանցելու տուգանքի գաղափարը միայն՝ առանց հաշվարկման որևէ փոխարժեք կամ մեթոդ նշելու: Գործնականում տուգանքը հաշվարկվում է տեղում՝ օդանավակայանում կամ ցամաքային անցակետում, երկրից դուրս գալիս: Քանի որ վիզայի ժամկետը գերազանցելու տուգանքի գումարը հաշվարկելու մեթոդը հստակ հայտնի չէ, վիզայի ժամկետի ավարտից հետո երկար տարիների ընթացքում կուտակվող տուգանքի գումարի չափը կարելի է միայն գուշակել: Վիզայի ժամկետը գերազանցելու տուգանքի գումարի մոտավոր չափի վերաբերյալ հարցին հարցվածների պատասխանները տատանվել են 500-ից մինչ 16,000 թուրքական լիրայի սահմաններում:

8 Էմրե Էրդողան և Փընար Ույան Սեմերջի, «Անորոշ կեցություն. Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտների և նրանց երեխաների դրությունը», Ստամբուլ, Հրանտ Դինք հիմնադրամ հրատարակչություն, 2018թ., էջ 46:

9 Թուրքիայի Հանրապետություն, Ազգային կրթության նախարարություն, «Մասնավոր ուսումնական հաստատությունների մասին» կանոնակարգ, հոդված 51/5, տպագրված է՝ Official Gazette No. 28239, 20.03.2012:

10 Թուրքիայի Հանրապետություն, Ներքին գործերի նախարարություն, «Օտարերկրացիների և միջազգային պաշտպանության մասին» օրենք 6458, հրապարակված է 2014թ.-ին, հոդված 9/3՝ Թուրքիա կրկին մուտք գործելու արգելքը պետք է չգերազանցի 5 տարին:

11 Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ դիվանագիտական հարաբերությունների խզումը չի ենթադրում հյուպատոսական հարաբերությունների խզում: Այս մասին ավելի մանրամասն ներկայացված է Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խմբի կողմից պատրաստած «Հայաստան-Թուրքիա հյուպատոսական հարաբերություններ» միջանկյալ համառոտագրում:

12 Մանրամասների և օրինակների համար դիտարկել Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խմբի կողմից պատրաստած «Հայաստան-Թուրքիա հյուպատոսական հարաբերություններ» միջանկյալ համառոտագիրը:

13 «Մասնավոր ուսումնական հաստատությունների մասին» կանոնակարգ, հոդված 51/5՝ հաշվի առնելով դպրոցների քվոտան, օտարերկրացի աշակերտները կարող են նաև կրթություն ստանալ այս դպրոցներում՝ որպես հյուր-աշակերտ, սակայն այս աշակերտներին ավարտական վկայական չի տրամադրվում: Դպրոցն ավարտողներին դպրոցի ադմինիստրացիան տրամադրում է անցած դասերը և համապատասխան գնահատականները փաստող փաստաթուղթ:

14 Թուրքիայի Հանրապետություն, Ազգային կրթության նախարարություն, «Մասնավոր կրթական հաստատությունների մասին» օրենք 5580, հրապարակվել է 2007թ.-ին, հոդված 3:

Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խումբը նախաձեռնվել է Հրանտ Դինք հիմնադրամի կողմից՝
Բերգհոֆ հիմնադրամի հետ համագործակցությամբ և Քրեսթ հիմնադրամի աջակցությամբ:

Hrant Dink Foundation
Anarad Hığutyun Building
Papa Roncalli Sk. No: 128 Harbiye 34373 Şişli / İstanbul
T: +90 212 2403361 - 62 | F: +90 212 2403394 | info@hrantdink.org | www.hrantdink.org